ԳԵՐԻ ԹՈՐՈՍ մտօք յիմար.
Քեզ դ(ա)տ(ա)ստ(ա)ն կայ ւ օր մահու,
Ի յայնմ ահեղ հրապարակին.
Ինչ չատ համար ունիս տալու։ (*)

* * *

Գ.

(Կարմրաւ) Ոտանաւոր. վ(ա)սն Դատաստանին Աւուրն հատուցման. չ(ա)րեացն պչարն. եւ բարեգործացն. զբա–րիքն։ Որ վկայէ սբ. աւետարանն։ Ար(ա)րե(ա)լ ի Թորոսէ։

Յորժամ տարերքն դըղըրդին.
Երկիքն ւ երկիր խոնարհանան,
Եւ կատարին կեանք եղելոց.
Որ ար(ա)րածքըս հիանան։

Լերինք բըլուրքըն խոնարհին.
Ձէտ տափարակ տեղի դառնան,
Ո(ր)պ(էս) ծըխու ճանճախարիթ.
Սեւագունին եւ դաշտանան։

Սարսէն ճկունք ի մէջ ծովուն.
Ծովք զարհուրին ւ այլեօք ծփան,
Եւ ամ(ենայն) շունչք կենդանեաց.
Որ ի յերեսս երկրի գեռան։

Գալարին ամպք եւ տարերք.
Ու խառնակլի օդն եւ դողան,
Մէգն եւ խաւարն աղաղակէ.
Յեւթապատիկ լուսոյ ծագման։

---

(*) Ձեռագիր անձնական ձեռագրաց հաւաքածոյ է, գրեալ 1661–ին Մինաս երեցէ ի վառնա քաղաք (Պուլկարիայ) էջ 50ա –52ա.։